Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատատակազմի ֆինանսական բաժնի 1-ին կարգի մասնագետի թափուր պաշտոն զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատատակազմի ֆինանսական բաժնի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-6/

1-ին կարգի մասնագետը կատարում է՝
ա.բաժնի պետի հանձնարարությունները ժամանակին և պատշաճ որակով,
բ. ապահովում է բաժնի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը,
գ.օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի, գույքահարկի և տեղական տուրքերի գանձում,
դ. սահմանված կարգով մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը գույքահարկ և հողի հարկ վճարող անձանց ներկայացնում է հաստատված ձևով գույքահարկի վճարման ծանուցագրեր (հիշեցումներ),
դ. իրականացնում է հսկողություն համայնքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում,
ե. կազմում և ներկայացնում է կիսամյակային հաշվետվություններ,
զ. իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ :

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
ա. միջնակարգ կրթություն,
բ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ,
«Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Գույքահարկի մասին», «Հողի հարկի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների իմացություն , ինչպես նաև
գ . տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն ,
դ. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2018 թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 12.00-ին, Փարաքարի համայնքապետարանի շենքում:
Դիմող ՀՀ քաղաքացիները Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթեր.
1. գրավոր դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով,
2. մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/,

վկայականի /ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
3. հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
4. հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
5 . «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
6.մեկ լուսանկար / 3x4 չափսի/,
7.անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով: Ներկայացված փաստաթղթերի պատճենները հետ չեն վերադարձվում:
Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել, ինչպես նաև ծանոթանալ պաշտոնի անձնագրին և հարցաշարին՝ նշված որևէ հասցեով, ամեն օր, ժամը 9.00-ից մինչև 18.00-ն, բացի շաբաթ, կիրակի օրերից
ՀՀ Արնավիրի մարզ, Փարաքարի համայնքապետարան, համայնքապետարանի աշխատակազմ, գ.Փարաքար, Նաիրի փ.42՝ /հեռ.0231 60042/և
ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն՝ ք, Արմավիր,Աբովյան 71,հեռ./0237/2-07-70,/0237/2-76-49/:
Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 09:00-18:00,բացի շաբաթ և կիրակի օրերից:
Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2018թ. սեպտեմբերի 3-ը